Վրանային ճամբար Վայոց ձորում

Առաջարկություն

Ծրագրի այս տարբերակը նախատեսում է 60 մասնակից, որում ներառված են սովորողներ և ակումբների ղեկավարներ:

Ա. Անհրաժեշտ պարագաներ.

- Տասներկու վրան, յուրաքանչյուրում հինգ մարդ հաշվարկով:
- Վաթսուն քնապարկ և պատգարակ (ՊՆ-ն ունի հատուկ քնելու համար հարմարեցված պատգարակներ)
- Երկու դաշտային խոհանոց: Չորս դաշտային զուգարան:
- Հոսանքի աղբյուր-գեներատոր (դվիժոկ)

Բ. Սննդի կազմակերպման հարցը ենթակա է քննարկման:

Գ. Ծրագիր. ներկայանում են հետևյալ ակումբներն իրենց նախագծերով.

«Էկո-հայրենագիտական» ակումբ, «Ապոլլոն» գիտակների ակումբ, «Ասպետ» ռազմամարզական ակումբ, «Տիեզերք» ակումբ, «Ռոբոտիքս» ակումբ, «Անգլիախոսների» ակումբ, «Պատանի հայրենագետի» ակումբ, «Գարդենիա» ակումբ, «Խաղարկային դատարան» ակումբ, «Թատրոնի» ակումբ, «Ազատ խոսքի ամբիոն» ակումբ:

Յուրաքանչյուր ակումբ մեկ ճամբարային օրվա կազմակերպիչ և պատասխանատու է իրեն հատկացված այդ օրվա ծրագիրը կազմելու և մյուս ակումբների ներգրավվածությունն ապահովելու համար:

Ծրագրում ներառված են կլինեն.

- առավոտյան ընդհանուր պարապմունք-տողան
- երեկոյան ընդհանուր պարապմունք-տողան
- աստղադիտակով դիտումներ, տիեզերագիտական պարապմունք
- ինտելեկտուալ մրցաշարեր
- էկո-հայրենագիտական բաց դասեր և արշավներ, շրջակայքի խնամքի աշխատանք
- տարածքի բուսական ֆոնդի ուսումնասիրություն
- ռազմամարզական վարժանք, այցելություն մոտակա զորամաս
- խաղարկային դատարանի նիստեր և բանավեճերի անցկացում
- թատերական ներկայացումներ
- ֆիլմերի դիտում
- հարակից գյուղերում բանահավաքչական և ազգագրական աշխատանքներ
- տարածքի եկեղեցիների ուսումնասիրություն և թվային ֆոնդերում դրանց ներառում
- առկա նյութերի հրապարակում՝ առնվազն երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Մասնակիցներ. կրթահամալիրի սովորողներ, հանրապետության այլ դպրոցների սովորողներ, ովքեր կհայտնեն ցանկություն մասնակցելու այս նախագծին:

Հարգանքով՝ Վահրամ Թոքմաջյան, Էմանուել Ազջոյան, Մարիամ Աբովյան